

ՏԵՐՄԻՆ - ԽՄԲՈՒՆԵՐՈՒՄ

1. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏՄԵՐՆԵՆ	500 ՂՐ.
ՎԵՅԱՄՍԵԱՅ	250 "
ԵՐԱՄՍԵԱՅ	150 "

Բաժանորդագրութիւնը կ'սկսուի ամեն ամսոյ 1 ին և 45 ին

100 ՓԱՐԱ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Fondateur

M. Mamourian

Directeur - Rédacteur en chef

H. MAMOURIAN

ARÉVELIAN MAMOUL, JOURNAL ARMÉNIEN QUOTIDIEN

100 ՓԱՐԱ



# ՎԱՐԺԱՐԱՆԱՅ ՎԵՐԱԲԱՅՈՒՄԸ

Ազգային վարժարաններու վերաբացման օրերը կ'մտնենան, նորընտիր անուշ Պ. Անդրանիկ կարապետեան արդէն հասած է քաղաքս և անտարակոյս պատրաստութիւններ կ'տեսնէ վարժարաններու վերաբացման համար:

Ինչպէս կ'տեղեկանանք վարժարանաց ծրագրին մէջ կարևոր փոփոխութիւններ տեղի պիտի ունենան: Ոյժ պիտի տրուի անգլիերէն լեզուին և անգլ. մէթոտներու:

Բնականաբար այս փոփոխութիւններուն համար կարևոր համարուած դժուր պիտի հաւաքուին, եթէ երբէք այդ ոյժերն հաստատելու համար դեռ ոչ չէ, որպէսզի կիսկատար ու թերի սկզբնաւորութիւն մը չըլլայ: Ինչ որ ամենէ աւելի վնասակար քայլն առնուած պիտի ըլլար կամ լաւ կամ բնաւ կէս միջոցներ կիրարկել խնհմութիւն չէ:

Տարակոյտ չունիք թէ Անգլիերէն լեզուն ոյժ տրուած ատեն բարձի թողի չպիտի ըլլայ նաև ֆրանսերէնն, որու օգտակարութիւնը և կարևորութիւնը չենք կրնար ժխտել:

Նպատակ չունինք թելադրութիւններ ընել՝ նոր ծրագրի մասին, անշուշտ այդ պաշտօնին կողմէն տեսուչն այդ կարողութիւնն ունի և չսպասեր որևէ խորհուրդի:

Մենք համակարծիք չենք որ տեսչական գործերու միջամուխ ըլլայ Ուսումն. Խորհուրդը, կատարելու ու բացարձակ ազատութիւն պէտք է ունենայ տեսուչ մը, իր ըմբռնած կերպով ծրագրելու ամեն բան, նկատելով որ արդէն Ուսումնական Խորհուրդի վստահութիւնը կ'վայելէ իր ընտրութեամբը՝ իբր տեսուչ Ազգ. երկսեռ վարժարանաց:

Ուստի, ինչպէս լսինք, նպատակ չունինք վարժարանական ներքին հարցերու մասին որևէ միջամտութիւն մը ներկի համարել:

Բայց որովհետև Պ. կարապետեան նորից մըն է Իզմիրի համար և բնականաբար անձանօթ մը միջամտարին, սրտածնական վերին մարմինն պարտականութիւն մը ունի, ծանօթութիւններ, լիակատար, անկողմնակալ ծանօթութիւններ հաղորդել նորընտիր տեսչին, Իզմիրի վրայ, անոր պահանջներուն, միջամտարի ստիպողականութիւններուն վրայ, որպէսզի սխալ քայլեր չառնուին և ամբողջական չղատապարտուին թափուած ճիգերն և ծախսուած գումարները:

Պ. Ա. կարապետեան երկու կարևոր պարագաներ պէտք է ուսումնասիրել ուշի ուշով, նախ՝ պիտի պատրաստէ Իզմիրի մէջ իր ապագան պատրաստելու հարկադրուած սերունդ մը և երկրորդ՝ նորակազմելի հայրենիքին համար, հոն հաստատուելու յառաջադրութիւն ունեցող, ուրիշ սերունդ մը:

Այս երկուքին ալ պէտք է գոհացում տայ:

Չենք կարծիր որ Տ. Յովնան Ս. Վ. և Պ. Ա. կարապետեան ըլլան անոնց մէջ, որոնք պատրանքն ունենան կարծելու թէ՛ անմիջապէս որ պիտի կազմուի Հայաստանն Իզմիրի բոլոր հայութիւնը գունդագունդ պիտի գիմէ հոն, հաստատուելու համար իր գործառնութիւններն ու իր ապագան:

Տարիներու կարօս և այն ալ խնդրական հարց մըն է այս խմբական գաղթուած և Իզմիրի հայութեան համար բաւական դժուարին անմիջական գործադրութեան գրուելու համար:

Բնականաբար եթէ ոչ կէսը Իզմիրի հայութեան զէթ մէկ երրորդ մասը առաջին թափին տակ պիտի փութայ Հայաստան, սակայն անգլին պիտի մնայ բաւական ստուար մեծամասնութիւն մը, որ տարիներու կարօս է այդ քայլն առնելու յանդգնութիւնն ունենալու համար:

Չտունանք ըսել թէ՛ անձանօթ կ'մնան մեզի ապագայ քաղաքական իրադարձութիւններն, որոնք մեծ ազդեցութիւն մը կրնան ունենալ Իզմիրի հայութեան ընձեռելիք ուղղութեան վրայ:

Ա. դ. Իզմիրահայ սերունդն կրթական ու գաստիարակական ինչ տեսակ կարօտութիւններ ունի, անա այս պարագան պէտք է որ ուսումնասիրէ նորընտիր տեսուչը:

Իզմիր՝ գործնական քաղաք մը, բառին ամբողջական րմաստով գրական միջամտար մըն է, չըսելու համար նիւթապաշտ Գիտութիւններ, և կարգ մը ութիւններու կարևորութիւնն չէ տրուած, լեզու և հաշիւ, անա Իզմիրի պահանջը:

Լեզուական ուսուցումին մեծ կարևորութիւն տրուած է և բնականաբար տիրող այժմու լեզուն ընդհանրապէս ֆրանսերէնն ըլլալով անոր պէտքը չեղատուած: Սակայն նոյնքան կարևոր է անգլիերէնն և ասոնց համահաւասար արժէք մը կ'ստանայ նաև յունարէն լեզուն, որու ներմուծումին կարևորութիւնը ուրիշ առթիւ ևս չեղած է ինք, մեր վարժարաններուն մէջ:

Ուրեմն պարզ խօսելով՝ Իզմիրի սերունդը փոփաքող է լեզուական բաւականաչափ սաշար մը ունենալ և միանգամայն աւետարական ասպարէզի համար անհրաժեշտ համարուած գիտելիքներու հմտութիւն: Ասոնցմէ զատ կարևորութիւնն չունին անոր համար կարգ մը գիտութիւններ և ուսումներ, որքան ալ անոնք կարևոր մաս մը կազմեն ուսման և կրթութեան հետ:

Իսկ թէ՛ ինչ բանի կ'կարօտի կամ պիտի կարօտի հայրենիք փոխադրուող հայ պատանին, այդ մասին ևս կարելի է ելլակողմնութեան մը յանգիլ, նկատի առնելով մեր հայրենիքին արդի վիճակը, անոր կլիման, հողը, գայն բարգաւաճ վիճակի մը սկզբնական շաղկի վրայ գնելու համար անհրաժեշտ համարող սրուեստներն ու արհեստներն: Այդ պահանջներուն համապատասխանող շըրջանաւարտներ անշուշտ մեր վարժարաններն չեն կրնար տալ և ճարտարա-

ճեաներ, օրէնդէաներ, հրագէտներ, տնտեսագէտներ պիտի կրնաք ունենալ, օժտելով այդպիսիներն եւրոպական կրթութեամբ ու գոստիարակութեամբ որևէ մասնագիտութեան մը կողմն ունեցողները զրկելով Եւրոպա կամ Ամերիկա: Հետևապէս մեր վարժարաններն նախապատրաստական պիտի ըլլան այդպիսիներուն համար և անոնց պիտի ուսուցուն թարգմանի ու նախապատրաստական ինչ ինչ ուսումներ, որոնք կրնան առնչութիւն ունենալ իրենց ապագային հետեւիք որևէ ճարտարարուեստի և գեղարուեստի հետ:

Իայց չէ՞ որ այդպիսիներն ևս պէտք ունին նախ և առաջ լեզուական ծանօթութիւններ ունենալու, իրենց հետեւիք որևէ սպարէզին մէջ անպատրաստի չգտնուելու համար:

Ուրեմն լեզուի ուսուցումը առաջին կարգին վրայ պէտք է գտնուի վարժարանական ծրագրին:

Միշտ գանգատներ եղած են որ մեր ազգային վարժարաններն որոշ ժամանակէ մը յետոյ չեն յաճախած հարուստին և բարեկեցիկին զաւակները, այդ գաղտնիքը պէտք է փնտռել վարժարաններու մէջ լեզուական ուսուցման թերի ըլլալէն և ոչ ուրիշ որևէ պատճառի մը արդիւնքէն:

Ներկայ շրջանին վարժարանաց վարչութիւնը բաւական պատկառելի պիտածէ մը պիտի ունենայ և պիտի կրնայ լիովին գոհացում տալ ժողովուրդի բաղձանքներուն, եթէ մտադրուած է վարժարանաց յառաջիմութեան նոր մղղում մը տալ և պատեհաբար շրջանին անոր կրած վնասները մասամբ դարմանել:

Հ. Մ.

## ԼԱՅՆՆԵՐՆ ՄՅՔ

Նորընտիր տեսուչը շրջապատուած է: Միշտ այդպէս կ'ըլլայ և այդպէս եղած է եկեր նորերու համար:

Մարդկային տկարութիւն թէ շատ, հացի խնդիր, երկուքն ալ, որովհետև զիրար կ'ամբողջացնեն:

Կուզէի անտես ունիկողին ըլլալ այն ամեն բամբասանքներուն և ամբաստանութիւններուն որոնք պիտի ընտցուէին մեկնողին վրայ:

Սակայն ունիկողին ըլլալու հարկ չկայ:

Գոց կրնամ մի տու մի ըսել այն ամեն գեղեցիկ խօսքերն ու վերաբերումներն, որոնք մեկնողը վարկաբեկելու տեղ, ո՛ր խեղճ արարածներ, կ'վարկաբեկին նոյն իսկ իրենց օրժանիքն, եթէ կրթէք ունին անկէ:

Եւ մի՛ զարմանաք, երբ նեղ կացութիւններու մէջ սրտապաններ չեն գտնուիր, իրենց շահերը պաշտպանող, որովհետև չափուած է անոնց գանկի արամազիմը և կշռուած անոնց հագիներու ճշմտութիւնը:

Ճաւային այն է որ անոնց մէջ գանուող հազուադէպ ազնիւ հողով բացառութիւն կազմողներն ալ մէկ ջրով կ'լուացուին՝ ընդհանուր ժողովուրդին կողմէ, սրբան ալ ծանօթ ըլլան անոնք իրենց տեղէն: Նկարագրով փառամասնութիւնն է:

Եւ ինչու՞ չեն խորհիր թէ՛ իրենց թելադրութիւններն ու ամբաստանութիւններն ուղղակի իրենց կ'անդրադառնան, որովհետև շատ բնական է որ իրենց այժմու կուռքը իրաւամբ խորհի թէ՛ իր յաջորդին առջև միևնոյն ընթացքը պիտի ունենան, վարկաբեկել զինքն բարձրացնելու համար նորեկը, լրենց շահերը պաշտպանելու լավար ունայնամտութեամբ մը:

Ճղակտար մի ըլլաք, սրտերնիդ խորտիկի մը նման պնակի վրայ դրած մի՛ ցուցադրէք, նկարագրել եթէ չունիք, գոնէ արթնամտութիւնն ալ չունիք, խորհելու թէ՛ միա՛խորհուրտ հետ չէ՛ ձեր գործը:

Շրջապատեցէ՛ք, դարձէ՛ք անոր չորս կողմը, բայց վաղը երբ ձեր բուն արժէքը ճանչնայ, պիտի ունենա՞ք քաջութիւնը սքողելու ձեր մաղքը և չթափելու անոր դէմ. ա՛յ ու ձախ, չթափելու անոր դէմ. ա՛յ ու ձախ,

ուղղակի կամ անուղղակի գծուած ամբաստանութիւններ և անոր ապիկարութիւնն խորհրդանշող գաղտնադրի փափուքներու...

Արդե՛ստեղի էք պարզապէս Անիրաւուած, ոտնակոխ եղած, հալածուած և մի չե իսկ մասնուած ըլլալու յաւակնութիւններ ունիք:

Ո՞վ էք դո՛ւք, ի՛նչ կարժէք, արժանիք ունեցողներն թշնամի կունենան, աս ալ կ'անգիտանաք...

ԵՍ

## ՄՐ. ՈՒՒԼՍԸՆ

Ե Ի

## ԱԶԳԵՐՈՒ ԼԻԳԱՆ

Համաշխարհային անհագնադուրդ պատերազմի հինգ երկար ու ձիգ տարիները դուաւրուոր անցան ու գնացին: Ասկայն, մարդկային պատմութեան էջերում աննախընթաց այս պատերազմը, անմտեղ իրենց նոր գործադիր բացման անջնջելի կնիքը դրոշմէ և ազգերի ու ժողովուրդներին, — մինչև օրս երեւակայական կարծուած — մերձեցման Ֆոնի վրայ, որի մասին մի քանի խօսք ասելու աւելորդ չենք համարուած:

Տիրող աստիճանաւորումներն ու շերտաւորումները, այսինքն՝ դասակարգերի դոյութիւնը, ինքնըստինքան, պերճախօս ասպոցոցներն են, կապիտալիստական աշխարհների բացարձակ և ուժեղ արապետութեան, որը փաստորէն եկաւ արտայայտեց այս հինգ տարուան տասնեակ միլիոնների մարդկանց կեանքերի փոփոխումով: Որովհետև, քանի որ պիտի ունի կապիտալիստական տիրապետութիւնը, սրուած են և նրանից ծագուած առած գոտակարգիչի յարաբերութիւնները և որքան ժամանակ կապիտալիստական աշխարհը երկրի տէր ու տիրական առտնցքը լինի, այնքան ժամանակ անիմաստ ու աշխարհակործան պատերազմները կը գառնան անխուսափելի:

Այդ կապիտալիստական աշխարհներն մէկի ռամկավարական ուժեղ խաբքի թիրախն ալ տայալիքը ուսալին անգամ եղաւ Մր. Ուիլսըն սրանից մի քանի ամիսներ առաջ ազգերի ընկե-



ՎԵՐՁԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

4. Պոլիս 30 Օգոստոս 1919

ՉՕՐԱՎԱՐ ՀԱՐՊԸՐԴ

Չօր. Հարպրդի գէպի Հայաստան ճամբորդութիւնը յ'տաճգուած է սեպտեմբեր ամսուան

ՅՐԱՆՍ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՁ

Յրանայի երեսի. ժող. վիճակը ուր խոսնորում ունկնդիրներ խոսեալ էին, նիստը չափագոնց աղկալից եղաւ: Խորհրդարանը ձեռք առաւ Գերմանիոյ հետ կնքուած հաշտութեան դաշնագրին վիճարանութիւնը: Վիճարանութիւնը պիտի շարունակուի վաղը:

ԱՒՏԱՐԻՈՅ ԵԼՄՏ. ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հաշտութեան բարձրագոյն խորհուրդը հաւանութիւն տուաւ Աւստրիոյ պարտագրուելիք կէսամտակաւ պայմաններուն եւ լոյսալոյսի մէջ և մաս մը տընտեսական պայմաններէն որոնք պիտի յանձնուին և անփոփոխելի են:

ԹՈՒՐԿ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐՆ Ի ԲԱՐՁՐ

Կարգ մը թերթեր կը գրեն թէ Բարիկի Համաժողովին ներկայանալու համար հրաւէր պիտի ըլլայ որպէսզի Թուրքիոյ պատուիրակներ զրկէ. այս լուրը որ և է կերպով չէ հաստատուած:

ՆՈՐ ԿԱՇՆԱԿՅՈՒԹԻՒՆ ՄԸ

Անգլիացի ընկերվարականներու պետ՝ Ռոպերթս Բարիկ հասած է: Թերթերը կ'հաստատեն թէ՛ այս ճամբորդութեան նպատակն է ապացուցանել թէ՛ անհրաժեշտ է որ Փրանքո-իտալո-պիլիպպին դաշնակցութիւն մը կազմուի Այս դաշնակցութիւնը կ'պնդէ Մր. Ռոպերթս վիճակուած պիտի ըլլայ ամբողջացուցիչ մասը համարելու Անկլո-թրանքո-Ամերիկեան դաշնագրին:

ԱՄԵՐԻԿ ԾԵՐԱԿՈՅՏԻՆ ՄԷՁ

Նիւ-Յորքէ կ'տեղեկացնեն թէ ծերակոյտի արտաքին գործոց յանձնախումբը, պաշտօնապէս կ'հարդրէ որ ձեռք պիտի առնեն առկախ մնացած քաղաքական ու հողային խնդիրներու վիճարանութիւնը: Այս խնդիրներու ստանալու թիւերը կարօտ պիտի ըլլայ երկու շարքուան: Յանձնախումբը ընդ մէջ ալ ոչ պիտի զբաղի Գիւլիսի և Իռլանտայի կարիւր հարցերով, որոնք կը շահագրգռեն Մ. Նահանգաց հասարակաց կարծիքը:

ՊԵԼՃԻԳԱ ԵՒ ԿԱՇՆԱԳԻՐԸ

Համախ գործակալութիւնը կ'տեղեկանայ Պրիւսիէի որ ՊելՃիգական ծերակոյտը իր երկուան նիստին մէջ վաւերացուցած է հաշտութեան դաշնագիրը:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱԶԱՏԱԿԱՆՆԵՐ

Շատ հաւանական է որ ամերիկեան ազատականները փոփոխութիւններ ներմուծել պահանջեն ազգերու դաշնակցութեան մէջ:

Պ Ա Ր Ս Ի Յ Շ Ա Հ Ը

Պարսից Շահը, երկուշաբթի պիտի մեկնի գէպի Եւրոպա:

ՊՈՒԼԿԱՐ ՀՐՈՍԱԽՈՒՄԲԵՐ

Սկիզբէն կ'ձանուցանեն թէ՛ պուլկար հրոսախմբեր և զինուորներ Քանթի մէջ ձայնակցութեանց գիտած են, սպաննելով և կոտորելով նոյն շքանակին յոյն և թուրք ժողովուրդը:

ԲՈԼՈՆԻԱՅԻՔ ԿՅԱՆՈՒՄԱՆՆԵՐ

Բէրլինական զօրաթմբիւնները կ'յառաջանան Պրէզիտի երկաթուղայ գծին ուղղութեամբ:

Օ Տ Է Ս Ա Գ Ր Ա Ւ Ո Ւ Ա Ծ

Հօնոնոն կ'տեղեկացնեն թէ՛ Ռիւսիոյ գործակալութիւնը հասած լուր մը կը հաստատէ Օսէսայի գրառումը Օտէսոյ գրառուած է որու կամուրջներէ որոնք կողմակերպուած են պայքարելու համար պուլկարներու դէմ: Այս լուրը բաւական մեկնութեանց տեղի տուած է և մեծ պարտութիւն մը կ'ընթացէ պուլկարներու դէմ:

Մ Ն Ա Հ Ա Ն Գ Ի Բ Ե Ի Մ Ե Կ Մ Ի Կ Ա

Մ. Նահանգներն վեջնականապէս որոշած կ'երեւին վերջին դէպքերու հետեան ըզով միջամտել Մեկսիկախի մէջ Այս պատճառաւ ցամաքային և ծովային զինուորական միջոցներ ձեռք առնուած են:

Ի Տ Ա Լ Ի Ա Ե Ի Յ Ո Ւ Ն Ա Տ Տ Ա Ն

Ազգային պաշտպանութեան քաղաքական ակումբը պատասխանելով այն շրջաբերականին, որով անկեղծ յարաբերութիւններ վերակառած են ընդմէջ Յունաստանի և Իտալիոյ, Իտալիոյ յախարարը իր երախտագիտութիւնը յայտնած է ակումբին վստահ ըլլալով որ որ և է թերիմացութիւն բառնալու պարագային ակումբը զօրավիզ պիտի հանդիսանայ:

Փ Ի Ո Ւ Մ Ի Հ Ն Ր Յ Ը

Մ. Ուելլըն յայտարարած է որ Ֆիւլմի խնդիրը հաղիւ հոկտեմբերին եզրակացութեան մը յանգեցնել կարելի պիտի ըլլայ:

Հ Ա Ն Թ Ո Ւ Ն Կ Ի Ի Ն Գ Ի Բ Ր Ը

Մր. Հօփ կողմէ ամերիկեան ծերակոյտին ստաշարկուած փոփոխութիւններն Շանթուկի մասին 9 ձայնի մեծամասնութեամբ ընդունուած է:

Հ Ո Ւ Ն Գ Ե Ր Ա Կ Ա Ն Գ Ն Ա Ն Ը

Հունգարական նոր գահիճը պիտի կազմուի անմիջապէս որ իր բոլոր անգամներուն միջեւ համաձայնութիւն մը գոյանայ:

Մ Ր Ա Բ Է Ն Ձ Է Ն Բ Ա Ն Տ Ա Ր Կ Ո Ւ Ա Ծ

Գերման պայտօնաթերթը կ'ըզէ թէ՛ Մարտի 11-ը Գերմանիոյ և Պոլսոյ միջև կայացած պայտօնաթերթը:

ԹԱՂԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ հետեւաբ կը ծանուցանէ. — Հակառակ կրկնուած ազդարարութեանց, թէ բոլոր խանութպանները պէտք է կրեն ճերմակ գոգնոցներ՝ նշարուած է որ խանութպաններէն ոմանք կարեորութիւն չտալով վեռելի ազդարարութեան կը շարունակեն տակաւին չհագնել ճերմակ գոգնոց և ողոտա պակել իրենց գործիքները: Թողապետութիւնը աղանձերու 110 զրչ. տուգանք մը հարկադրած է: Այնք որ չպիտի ուզեն հատուցանել այս տուգանքը, այլևս չպիտի կրնան շարունակել իրենց տրհետը և պիտի գոցուին իրենց խանութիքը:

Կ Ը Փ Ն Տ Ո Ւ Ի

Ալէմտանցի Տ. Աննա լուր կ'ուզէ իր գաւազնի Լեւոն Մանուկեան, այժմ 14 տարեկան, կը գտնուի Ամերիկա, Վէսթ-Հայտերն-ճիլզի Նեւ-Յորքէ՝ քիչ հեռու: (Կը խնդրուի ամերիկահայ թերթերէն արտատպել զայս):

— Կեսարացի Կարապէտ Սէմէր-ճեան Շամ զինուոր գացած: Կը խնդրուի խմացնել խմբագրութեան:

— Տ. Աղանի Թաթոսեան կ'փնտռէ իր ամուսինն Իզմիլոյ Օննիկ Թաթոսեան:

— Իզմիլոյ Յարութիւն Մուլախան էնկիւրի զինուոր գացած. 8 ամիս է ի վեր լուր չկայ (Կը խնդրուի Պոլսոյ թերթերէն արտատպել զայս):

— Մարտիացի Պաղտատար Մանկիեան, Կարտաքազմէն ստաշ Բարիկ գացած էր ուր գերակալութեամբ կ'ըզբաղէր:

— Էվէրէկցի Թագուր Տէօնեան 3 տարի առաջ Շամ զինուոր գացած մէկ աչքը աւրուած է:

— Ազէհիբցի Սաթնիկ Կոլճեան կը փնտռէ իր Կայրը Ստեփան Սօլ-մէնեան և եղբայրը Գեորգ, Տէր-Չօր արքայուած և ամուսինը Լէօն Եօլճեան էնկիւրի զինուոր գացած:

— Պօղազիանի Գուր-Գուլու գիւղէն Պալատուր Իրանեան կը փնտռէ իր հայրը՝ Սազեր, մայրը Սուլթան, երեք հօրեղբայրները՝ Դաւիթ, Առաքել և Ղուկաս, եղբայրները կարապետ, Ղուկաս, Գոչէն, Յարութիւն, քոյրերը Մարեամ, Էլիզար, Կիւլեհէ:

— Սէօքէցի Յարութիւն Վրանեան կը փնտռէ իր եղբայրը, սակերիչ Հըրանդ, զինուոր գացած է նախ Շամ յետոյ Տիարպէթի Լիճէ քաղաքը:

Ս. ԱՍՏՈՒՄԵՆԻԱՅ ՏՕՆԸ Ի ԳՕՐՏԵԼԻՑ

Գիւլիս Ս. Աստուածածնայ եկեղեցոյ տօնախմբութիւնը ըլլալով յառաջիկայ Կիրակի օր, Առաջ. Տեղապահ Տ. Յովհան Մ. Վ. Կարապետեան հանգրծեալ է Ս. Պատարագ մատուցանել:

Այս առթիւ բարեպաշտ երկսեռ հասարակութիւնը ներկայ գտնուի կը հրաւիրուի եկեղեցական արարողութեանց:

Շոգենաւային երթևեկութիւնը պիտի գիւրացնէ ռեստորաններու երթևեկը: Շարքաթ օր մինչև կէս դիշեր և Կիրակի մինչև սուրբական ժամուն, կանոնաւոր սպասարկութիւն պիտի ըլլայ:

ԹԱՂ. ԽՈՐՀՈՐԻԴ

ՀԵԼԼԷՆ ՊԱՐԵՆԱԽՈՐՄԱՆ ԹԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՆ

Հէլլէն պարենաւորման յանձնախումբին կը ծանուցուի թէ՛, քաղաքիս հեղին բանակին եղջերագետուղի (քէի պոնյուզ) ազալը նուազութիւն տրուած է: Նուազութիւն տեղի պիտի ունենայ օգոստ. 21 (Հ. Տ) չորեքշաբթի օր (Կ. Ա) ժամը 10-12: Նուազարդի մասնակցիլ ուզողները կրնան մինչև երրորդ օրը պայմաններումսին յանձնախումբին տեղեկութիւն ստանալ Տեղալու ԼԱՄՊՐԱ:ՐԱ:ԲԻՍ

մերէ յետոյ հաւաքուին և շարունակին իրենց մայր զանգերը: Անոնց գործունէութիւնն բեղմնաւոր ընելու համար հայ վարժարաններու տնօրէններն հասկացողութեան մը կ'պիտի գան, միտրիակ ժամանակացոյց մը հաստատուելու, այսպէս օժանդակելով Սքառ թիւակոն կազմակերպութեան անխփան շարունակելու համար իր գործը:

— Ամերիկեան նպատաստագրի ը'գահուր առողջապահական ճարտարագէտը Մր. Նիւմէն — որու վրայ ծանրացուցած էին իր բարեկամները, մեր հիւանդանոցին շէնքն անյարմար դրած ըլլալու մեծագո ծուլիւնը... և այդ ձեռնարկին անյաջողութեան բաւուր պատասխանատուութիւնը, — ու ուրախ ենք որ առողջացած է իր վերջին հիւանդութիւնէն և ձեռնարկած իր պաշտօնին: Մր. Նիւմէն Հայ Աքադեմիկը ընդհանուր պետի պաշտօնը ստանձնած է և կ'ստատանայ մեծ դարկ մը տալ անոր: Մ. Նիւմէն ամբողջ ինն տարիներ շարունակ Նիւ-Յորքի ամերիկեան քառութիւնու վարչութեան անդամակցած է և կը հաւատան թէ մեծ ձեռնհասութիւն ունի սքառութեան գործին մէջ: Այսպիսի ձեռնհասութեամբ օժտուած անձ մը աւելորդ է ըսել թէ որքան օգտակար կրնայ հանդիսանալ Հայ Աքառութիւնը համար:

— Հրապարակ կ'ենէն և մօտերս իզմիլ կ'հասնի Պերլինի Ամերիկեան դեսպան Մր. Ճէրլրտի գործը, Պ. Մ. Շամտանճեանի թարգմանութեամբ:

— Պ. Շամտանճեան որ անխնայ աշխատող մըն է սկսած է նաև թարգմանել Մանուկի Սամի «Օսմ. Կայսրութեան Ճակատագիրը» անուն ըստուար ու գեղեցիկ գործը, որ հրատարակ պիտի ելնէ պրակ առ պրակ և մօտերս կ'հասնի իզմիլ: Ընթերցող և հետաքրքիր հասարակութիւնն թէ ձերբորտի և թէ Մանուկի Սամի այդ հոյակապ գործերուն մէջ պիտի Պզտնէ հարկ եղած բոլոր ծանօթութիւնները քաղաքական անցուղործին վրայ:

Տեղական Լուրեր

Մ. ԲԷՌՈԼԻՍ, հելլէն դահլիճին փոխ-վարչապետը, և ելեւմտական, երկրագործութեան, պարենաւորման նախարարները ու գրամատչէրները հաւաքուելով խորհրդակցած են, որոշելու համար տրախմբի գինը, Թուրքիոյ Ամերիկայի և Յրանսի հրապարակութեան գրամական կազութեան համեմատութեամբ: Այս խորհրդակցութեան մէջ վճռական որոշում մը պիտի առնուի:

ՊԵՐԿԱՄ՝ Է կը հետագրին թէ՛ Տիգրիցի Ամէն Հալիմ թուրք սպաննուած է իր ընկերոջ՝ Իպրահիմ Հասանի կողմէ: Այս սպաննութեան շարժառիթը սիրային վեճ մը ըլլալ կը կարծուի: Ոճրագործը անմիջապէս փախած է: Ոստիկանական ուժեր գտնուած ուղղութեամբ ցրուած են ոճրագործին հետքը գտնելու համար:

ԱՌՋԻ ՕՐ, գիշերային պահակախումբերէն մին, Բէօփի ճօղլու թաղին մէջ գտած է նորածին մը, աղջնակ մըն էր: Փոխադրած են Անտէր մանուկներու Ապատանարանը: Տղուն վրայէն գտնուած է թուղթ մը, որու մէջ, ըսուած է թէ՛, բազմապատ ըլլալով այդ մանկան ծնողքը, չէր կրնար ապրեցնել զայն, և այսպէսով կ'ստիպուէր հանրային գիթութեան թողուլ:

ՀԱՆՐԱՅԻՆ, առողջապահութեան տնօրէնութիւնը հետեւաբ կը ծանուցանէ. — Վերջին 24 ժամուան ընթացքին իզմիլի մէջ պատահած է թիւֆուսի, թիֆուսի և ծաղիկի մեկական դէպք:

ԳԷՂՈՒԷՑ շոգենաւոր Միւսիւնէն մեծ քանակութեամբ ցորին բերած է: Երկու աւաւտուն ժամը 9,30ին բաւական սաստկութեամբ երկրաշարժ մը ստատուեցաւ:

ՄԵՐ ՊԱՆԴՈՒԿ ԵՒ ՍՏՈՒՆ

ՍԻՋՍՁԳՍՅՈՒՆ

Ք Ա Պ Ա Ս Ա Լ Է Փ ՈՂ Յ

Բարձր-լուսն խաչ-ճիւղի շինչ

Յարգոյ յաճախողաց ամեն տեսակ հանգստութեան միջոցները նկատի առնելով, մաքուր և նոր անկողին և մահճամուկերով կահուստը, մասնաւորապէս և ընտանիքներու սենեակներ պատրաստուած են:

Ճիւղիքի հոշակաւոր օգին և այլ ըմպելիներ ու համեղ մէղէներ, շատ պատուական թէմպէքիէ կլկլակ և մաքուր սպասարկութիւն:

Ամուրիներու վարձու սենեակներ: Պատուաւոր և գործունեայ սպասարկութիւն:

Տեղիւն: Մ. Բարձր-ճեմն և Ի. Ընկ.

ՏՊՔ Ս. Խ. ԺԱՄԱՎՈՂՅԱՆ

Իրոքոյժ եւ ակնորոյժ

Հիւն-Լ

ԱՍԵՐԻԿԱՆ ՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԵՆ

ԼՈՆՏՈՆԻ ԱՐՔ. ԱԿՍԱՐՈՒԺ. ՇԻՒՆԱՂԱՆՈՅԷՆ թեթեւ ու ծանր ամէն տեսակ վիրաբուժական գործողութիւններ կ'կատարէ կանանց և այրերու:

ԱՋՔԻ ՎՍԵՐԱՍԵՐՍԱԼ

գարմանու մեքէ և գործողութիւններ, ինչպէս նաև դիտակներու ակնոցի շափեր կ'որոշէ:

Իրէն գալիք հիւանդներուն մասնաւոր կարգադրութիւններ:

Հիւանդներ կ'ընդունուի, բացի կիրակիէ, ամէն օր կ. ա. ժ. 9-12 կ. ե. ժ. 2-5 իր բնակարանը Բէշիտիէ Ճատտէ թիւ 40 (Պ. Պայքանի տունը):

ՏՊՔ. Յ. ԳԱՐԲԻՆԵԱՆ

Մ Ա Ս Ն Ա Գ Է Տ

ՆԵՐՔԻՆ, ԿԱՆԱՆՑ ՆԻ ՏԳ. ԱՅՈՑ

Հիւանդութիւններու

Հիւանդ կ'ընդունի բացի կիրակիէ ամեն օր: Առաւօտ ժամը 10. 12 ինչ և կ'ետը 3-5.

ՊԱՇՏՈՆԱՏԵՂԻՆ. — Հայոց բաղ Մօսկու փողոց թիւ 83:

ՄԱՍՈՒԿԻ ՏԱԿ Է

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄԵՔ

ՎԱՐԴԳԷՍԻ

ՄՏՔԻՐ ՈՒ ՊԱՏՆԵՐՆԵՐ՝

Պ Բ Ք Ո Ց Վ Է

ԳԻՆ 15 ՂՐՇ.

ԼՈՒԻ ՊԱՐԹՈՒԻ ՏԵՂԵՎԱԳԻՐԸ

ԳԵՐՄԱՆ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԳԱՇՆՂԳՐԻՆ

ՊԱՏԱՐԱՆԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՒ ՀԱՌԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ե՛տ զքոթեան կառավարական պաշտօնակիր բողոքներուն հակառակ, Պիտի կառավարութիւնը կը պատճառաբանէ թէ «արժանահաւատ լուրեր» ֆրանսական ուժերու զէպի կիւքանալով յառաջադրուած թիւը ծանուցած են: Ասիկայ ստույգութիւն մըն էր Միւնխայն ստույգութիւնը և միւնխայն բանաձեւը իր պատրուակ պիտի ծառայէ իրեն՝ արդարացիաբար համար օգոստ. 4 իր արշաւանքը զէպի Պիտի-ճիւղ, որուն չէզոքութիւնը Բրուսելս երաշխաւորած էր 1839 Ապրիլ 19 թ. Լոնտոնի զաշարկով: Գերման կառավարութիւնը ի զուր ջանալէ ետք անարեկելու կամ կաշառելու Պիտի կառավարութիւնը, կը պատրուակէր թէ «վստահելի լուրեր» տարակոյտ չէին թողուր ֆրանսայի նպատակներու մասին գրաւելու համար Պիտի-ճիւղ, պատրուակ մը պէտք էր: Գերբրեւակայութիւնը ընդ երկար թար- նագրութիւնը չէր բան գտնելու:

ՏՊԱՐԱՆ ԱՐԱՄԵՐԵԱՆ

ՀՐՄՆՈՒԿ 1883ԻՆ

ՏՊԱՐԱՆԱՆ մէջ կը տպագրուին յրբեք, զորոյնքէ, տնտեսներ, յայտարարութեան, հարձականքներով զերկուստոսներ ու յանդիւրներ են:

ՏՊԱՐԱՆ ՈՎ մէջ կը տպուին նամակագրութիւն, պատրաստներ, հաշուեցուցակներ, ընկալագրեր, վերջապէս վաճառատան մը վերաբերեալ ամեն տեսակ տպագրական գործեր:

ՏՊԱՐԱՆԱՆ մէջ կը տպուին տեղեկագրութիւն, երկրորդներու նամակ-հրատարակչեր տոնակներ և վերջապէս տպագրական արհեստին վերաբերեալ ամեն տեսակ գործեր:

Ամեն լեզու: ՀԱՅԵՐԵՆ, ՖՐԱՆՍԵՐԵՆ, ԱՆԳԼԵՐԵՆ, ՅՈՒՆԱՐԵՆ, ՅՈՒՐԵՐԵՆ

ՏԵՄԱԳՆԵՐՈՒ ՊԵՍՊՈՒՍՈՒԹԻՒՆ

ԱՄՆԵՆ ՏԵՄԱԿ ԳՈՇԵՐՈՎ

Մամուր եւ խճամուր գործ օրուան զիցերու վրայ Տպարանս թաց է առաւօտէ մինչև կես գիշեր խնդրակներու հաւաք

Վ Ճ Ա Ր Ս ՈՒ Ն Ք Կ Ա Ն Խ Ի Կ

ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Կրակի դիմ. — NATIONAL UNION SOCIETY LTD. LONDON CENTRAL INSURANCE CO. LTD. LONDON

Ծովային. — PHOENIX ASSURANCE COMPANY LTD. LIVERPOOL Դիմելը մանրամասնութեանց հաւաք.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐ Լ.ՆԻ Լ. ՎԱՐՊԵՏԵԱՆ

ՊՈՂՈՍ ԿԱԿԱՉԵԱՆ

ՆՇԱՆԱԳԻՐ (ԱՆՍԷՐՆ)

Ամէն տեսակ լեզուներով և թշնամով

Նաև պայմաններ իրայ

Վտարածանութ այս վարպետը տարագրութիւնէ հասած քաղաքս գործի սկսած է, թէ ճաշակաւոր և թէ աժան գիներով զահագնելու պատրաստ յաճախողները Փափաքողք գիմեն Սբարեանի խանութը Առաջնորդարանի դիմաց Շահան խանի կից:

ԳԻՆԸ ԱՃԱՊԱՐԵՑԷՐ

ՄՕՐԿԵՆՔԱՈՒ

ՆԻ ԼԷՓՍՈՒՍ

ROYAL EXCHANGE ASSURANCE

ՀՐԴԵՅԻ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԸՆԿ. ԻՐԺՈՒՆԸ C. WHITTALL et Co. Շ. ՈՒԻԹՅՈՒ և ԸՆԿ.

ձակ ըլլալ նոյն իսկ առաջին օրերուն մէջ: Ասոր համար պէտք է մեծ բանակ մը կեցողոնացնել, որուն պիտի հետեւին Լանտիլերներու զօրեղ գումարտակներ, որոնք փոքր տէրութեանց բանակները պիտի ստիպեն մեղի հետեւելու, կամ առնուազն անգործ մնալու պատերազմի պաշտին վրայ, և որոնք պիտի ջախջախեն զանոնք զինեալ գիմազրութեան մը պարագային»:

Այս վաւերացումներուն կը միանան այն չարագանց հաշակաւոր խոստովանութիւնները, զորս Ռայսթապի կին առջեւ ըրաւ կայսրութեան վարչապետը, «թող թէ քուրջերու» մարզը:

«Պարոններ, ինչզիմքնիս պաշտպանելու ստիպողական հարկին մէջ գտնուեցանք, և հարկը օրէնքը չը ճանչնար Մեր զօրագունդերը կիւքանէնպուրկը զրաւեցին, և գուցէ արդէն կոսեցին Պիտի հողին չվրայ Պարոններ, ասիկա միջազգային իրաւանոց պահանջուններուն հակաբան է: Միք բռնագատուեցանք Պիտի և կիւքանէնպուրկի արդար բողոքները ոտնակոխ ընելու: Այս անիրաւութիւնը բաց է իր բաց կ'ըսեմ, — պիտի գարմանենք անմիջապէս որ մեր զինուորական նպատակին հասնինք: Երբ

ՊՈՅԱՋԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆ

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԵՒ ՅԵՐԵՒԱՆԻ

Շ Ք Ձ Ա Ն Յ

Ազգային հիմնական դաստիարակչութիւն. շեղուցիական և անհրաժեշտ խնամակալ պատրաստութիւն (մասնաւոր հոգածութեամբ կ'ուսուցուին Ֆրանսերէն, Անգլիերէն և Յունարէն լեզուները):

ՎԵՐԱԲՆՈՒՄ ՅԱՌԱՋԻՎԱՅ ԴԵ (3 ՍԵՊ.)

Դասերը կ'սկսին նոյն օրն իսկ Մարտի և ընդունելութեան պայմանները համար դիմել տնօրէնութեան, Ֆրանսիէ (Ապրահամ) փողոց, թիւ 16:

Առաւօտները ժամը 9-12

Դ Պ Ր Ո Յ Ա Կ Ա Ն Նոր տարեշրջանի առթիւ, հայերէն և Ֆրանսերէն ամէն տեսակ դասագրքեր զնելու համար գիմել՝ ԳԱՌՆԻԿ Ա. ԲԱՐՈՒՆԱԿԱՆԻ, (ՏԼ. Մեղիգ մաստիւր, Գեղեղեղ) Յանձնարարութիւնները կը կատարուին փութով և ճշտապահութեամբ:

Յանձնարարութեանց փոխարժէքը կանխիկ է:

Նոյն հասցէին պէտք է դիմել նաև՝ ունենալու համար հանրածանօթ երգահան — գաշնակահար Պ. Յ. Սիւնանանի բոլոր երաժշտական հրատարակութիւնները, մասնաւորապէս նոր հրատարակած Բամ Փորոսան ու Հայաստանը:

Հատին գինն է 25 դրը:

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԻՐ ԳՈՐԾՆՔԱՅԸ

ՍԿՍԵՍԻ ՕԳՈՍՏՈՍ 15 ԷՆ

«Զարթոնք» Լուսարանական Միութիւնը կազմակերպած է Գիշերային դասախօսութեանց շարք մը՝ Անգլերէն, Ֆրանսերէն, Հայերէն լեզուներու, ինչպէս նաև Թատրոնի մասին Տոմարայտնեան և Իրաւագիտութեան Մանուէլները՝ խիստ գիւրամատչելի պայմաններով: Հետևի վաճառողներ այժմէն դիմել Պ. Նշան վարդանեանի, Եկեղեցուց գիմաց Պ. Կ. Պալպանեան վաճառուները:

ձակ ըլլալ նոյն իսկ առաջին օրերուն մէջ: Ասոր համար պէտք է մեծ բանակ մը կեցողոնացնել, որուն պիտի հետեւին Լանտիլերներու զօրեղ գումարտակներ, որոնք փոքր տէրութեանց բանակները պիտի ստիպեն մեղի հետեւելու, կամ առնուազն անգործ մնալու պատերազմի պաշտին վրայ, և որոնք պիտի ջախջախեն զանոնք զինեալ գիմազրութեան մը պարագային»:

Այս վաւերացումներուն կը միանան այն չարագանց հաշակաւոր խոստովանութիւնները, զորս Ռայսթապի կին առջեւ ըրաւ կայսրութեան վարչապետը, «թող թէ քուրջերու» մարզը: «Պարոններ, ինչզիմքնիս պաշտպանելու ստիպողական հարկին մէջ գտնուեցանք, և հարկը օրէնքը չը ճանչնար Մեր զօրագունդերը կիւքանէնպուրկը զրաւեցին, և գուցէ արդէն կոսեցին Պիտի հողին չվրայ Պարոններ, ասիկա միջազգային իրաւանոց պահանջուններուն հակաբան է: Միք բռնագատուեցանք Պիտի և կիւքանէնպուրկի արդար բողոքները ոտնակոխ ընելու: Այս անիրաւութիւնը բաց է իր բաց կ'ըսեմ, — պիտի գարմանենք անմիջապէս որ մեր զինուորական նպատակին հասնինք: Երբ